



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

04.10.2019թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/64**

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Բողոք բերող՝ «Ջերմուկչին» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Ա. Բազեյանի
Բողոք բերող «Ջերմուկչին» ՓԲԸ-ի տնօրեն՝ Կ. Ստեփանյանի, ներկայացուցիչներ՝ Ա.
Պարանյանի, Հ. Ենգոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթ, «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ
քաղաքի Քաղաքային զբոսայգու բարեկարգման, հեծանվաուղու և սանհանգույցների
կառուցման» աշխատանքների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ քննության առնետով «Ջերմուկչին» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն)
կողմից 06.09.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից
փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցել Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված «ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 28.08.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 06.09.2019թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, իսկ 12.09.2019թ.-ին և 26.09.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 26.09.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.10.2019թ.-ին:

2. «Ջերմուկշին» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ջերմուկշին» ՓԲԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝ «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի քաղաքային զբոսայգու բարեկարգման, հեծանվաուղու և սանհանգույցների կառուցման» աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթ:

Մրցույթի հրավերի 1.1. կետի համաձայն՝ հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.

Ըստ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» հետևյալ ոլորտների՝

Չափաբաժինների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
1	բնակելի, հասարակական և արտադրական
	էներգետիկ

	հիդրոտեխնիկական
--	-----------------

Հրավերի 2.5 կետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող՝

1) <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիստուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում. Քաղաքաշինության բնագավառում տարածքների բարեկարգման աշխատանքների շինարարության իրականացումը՝ բնակելի, հասարակական, արտադրական, էներգետիկ և հիդրոտեխնիկական լիցենզիաների ներքո աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Ճանապարհաշինարարական աշխատանքների, ներառյալ դրանց իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման գնումների դեպքում տնտեսական գործունեության խմբերը սահմանվում են հաշվի առնելով գնման առարկայի տեսակը):

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատված՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող

ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ջերմուկշին» ՓԲԸ-ն և որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.07.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4 կետի 3 և 4 ենթակետերի համաձայն՝ որոշեց հարցում կատարել ՀՀ ՊԵԿ՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին պահանջվող տեղեկությունը ստանալու նպատակով, ինչպես նաև ծանուցել «Ջերմուկշին» ՓԲԸ-ին՝ ծանուցումը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ձևով ներկայացնի հրավերով պահանջվող փաստաթղթերը...:

Գնահատող հանձնաժողովը 28.08.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է հետևյալը.

«Ջերմուկշին» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

Ներկայացվել է նաև ՀՀ ՊԵԿ-ի եզրակացությունը.

«Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից նախկինում կատարված ՀՀՎՁՄ-ԳՀԱՇՁԲ-04/17-3 և ՀՀՎՁՄ-ԳՀԱՇՁԲ-03/17-3 պայմանագրերում բացակայում են ծավալաթերթ-նախահաշիվները:

2016-2018թթ. համախառն եկամտի հանրագումարը կազմում է 166,205,690 ՀՀ դրամ, որը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

Արդյունքում նիստը կասեցվել է և «Ջերմուկշին» ՓԲԸ-ին տրվել է երեք աշխատանքային օր արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար:

Այնուհետև գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է հետևյալը.

«Ջերմուկշին» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը.

Համաձայն ներկայացված <<Հաշվարկ ռեզիդենտների շահութահարկի>> փաստաթղթի, որը «Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է առանց ՀՀ ՊԵԿ-ի կողմից հաստատման՝ 2016-2018 թթ. համախառն եկամտի հանրագումարը կազմել է 182,205,690 ՀՀ դրամ, որը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

Ներկայացված նախկինում կատարված պայմանագրերում էներգետիկ լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների գումարը չի բավարարում հրավերով սահմանված

պահանջին, և անհրաժեշտ է ներկայացնել էներգետիկ լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների նվազագույն 15,350,116 ՀՀ դրամի լրացուցիչ պայմանագիր:

Ներկայացված նախկինում կատարված պայմանագրերով ներկայացված աշխատանքներում բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների հանրագումարը չի բավարարում հրավերով սահմանված պահանջներին, և անհրաժեշտ է ներկայացնել բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների նվազագույնը 53,107,154 ՀՀ դրամի լրացուցիչ պայմանագիր:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ ծանուցել մասնակցին ներկայացնել լրացուցիչ պայմանագրերը 3 աշխատանքային օրվա ընթացքում և ՀՀ ՊԵԿ ուղարկել գրություն՝ մասնակցի ճշգրտված համախառն եկամտի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Հանձնաժողովը արձանագրեց՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում ստացվել է պատասխան գրություն:

ՀՀ ՊԵԿ-ի կողմից 2019թ. օգոստոսի 22-ին ստացվել է պատասխան, համաձայն որի «Ջերմուկշին» ՓԲԸ-ի 2016-2018թթ. համախառն եկամուտը կազմում է 182,205,690 ՀՀ դրամ, որը պակաս է «Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկից:

Հանձնաժողովը որոշեց՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը գնահատել անբավարար և մերժել:

«Ջերմուկշին» ՓԲԸ-ի հայտը <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով սահմանված պահանջներին չհապատասխանելու հիմքով մերժելու մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայրով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայրը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

«Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը՝ 179 500 000 ՀՀ դրամ՝ որպես արժեք, և 215 400 000 ՀՀ դրամ՝ արժեք + ԱԱՀ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի 2016-2018թթ. համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ «ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում ներկայացված գնային առաջարկից:

Վերոհիշյալի հիման վրա կարելի է արձանագրել, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ն ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ, քանի որ վերջինիս երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը՝ ՀՀ դրամը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից՝ ՀՀ դրամից:

«Ջերմուկշին» ՓԲԸ-ի հայրը «Մասնագիտական փորձառություն»՝ որակավորման չափանիշի մասով սահմանված պահանջներին չհապատասխանելու հիմքով մերժելու մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

- 2) տեխնիկական միջոցներ,
- 3) ֆինանսական միջոցներ,
- 4) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

<< կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ պարանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի 2.5 կետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող՝

1) <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային

արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանափայ են համարվում. Քաղաքաշինության բնագավառում տարածքների բարեկարգման աշխատանքների շինարարության իրականացումը՝ բնակելի, հասարակական, արտադրական, էներգետիկ և հիդրոտեխնիկական լիցենզիաների ներքո աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Ճանապարհաշինարարական աշխատանքների, ներառյալ դրանց իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման գնումների դեպքում տնտեսական գործունեության խմբերը սահմանվում են հաշվի առնելով գնման առարկայի տեսակը):

Ինչպես արդեն նշել ենք, ի կատարումն Հրավերի 2.5 կետի պահանջների, «Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել են քաղաքաշինության բնագավառում տարածքների բարեկարգման աշխատանքների շինարարության իրականացումը՝ բնակելի, հասարակական, արտադրական, էներգետիկ և հիդրոտեխնիկական լիցենզիաների ներքո աշխատանքների նախկինում կատարված պայմանագրեր, որնց հանրագումը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Շտկման փուլում գնահատող հանձնաժողովի կողմից պահանջվեց ներկայացնել այդ պայմանագրերի ծավալաթերթ-նախահաշիվներ, ինչն Ընկերության կողմից կատարվեց:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակցի կողմից ներկայացված պայմանագրերի ծավալաթերթ-նախահաշիվները՝ արձանագրեց հետևյալը. <<Ներկայացված նախկինում կատարված պայմանագրերում էներգետիկ լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների գումարը չի բավարարում հրավերով սահմանված պահանջին, և անհրաժեշտ է ներկայացնել էներգետիկ լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների նվազագույն 15,350,116 ՀՀ դրամի լրացուցիչ պայմանագիր: Ներկայացված նախկինում կատարված պայմանագրերով ներկայացված աշխատանքներում բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների հանրագումարը չի բավարարում հրավերով սահմանված

պահանջներին, և անհրաժեշտ է ներկայացնել բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների նվազագույնը 53,107,154 ՀՀ դրամի լրացուցիչ պայմանագիր:

Վերոհիշյալի արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը գնահատել անբավարար և մերժել:

Բողոքներ քննող անձի ուշադրություն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի հրավերի համաձայն պահանջվել է, որպեսզի մասնակցի կողմից ներկայացվեն քաղաքաշինության բնագավառում բնակելի, հասարակական, արտադրական, էներգետիկ և հիդրոտեխնիկական լիցենզիաների ներքո շինարարական աշխատանքների իրականացման պայմանագրեր, որոնց շրջանակներում իրականացված աշխատանքների ծավալը պետք է պակաս չլինի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Վերոհիշյալից ուղղակիորեն բխում է, որ Հրավերի համաձայն՝ ընդամենը անհրաժեշտ է, որ ներկայացվեն պայմանագրեր, որոնց շրջանակներում պարտադիր իրականացված լինեն շինարարական աշխատանքներ և՛ բնակելի, հասարակական, արտադրական լիցենզիայի, և՛ էներգետիկ լիցենզիայի, և՛ հիդրոտեխնիկական լիցենզիաների ներքո:

Մինչդեռ հաշվի չառնելով, որ մասնակցի կողմից ներկայացվել են այդ պայմանագրերը, գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ անհրաժեշտ է ներկայացնել էներգետիկ լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների նվազագույն 15,350,116 ՀՀ դրամի լրացուցիչ պայմանագիր և հասարակական և արտադրական լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների հանրագումարը չի բավարարում հրավերով սահմանված պահանջներին, և անհրաժեշտ է ներկայացնել բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի ներքո կատարված աշխատանքների նվազագույնը 53,107,154 ՀՀ դրամի լրացուցիչ պայմանագիր:

Այսինքն գնահատող հանձնաժողովը, դուրս գալով Ընթացակարգի հրավերով սահմանված՝ <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը գնահատելու համար սահմանված պահանջներից, լրացուցիչ պահանջել է Ընկերությանը ներկայացնել՝ ամեն լիցենզիայի շրջանակներում կատարված պայմանագրերը՝ առանձին-առանձին, մինչդեռ հրավերով հստակ սահմանվել է, որ՝ նմանատիպ են համարվում ընդհանուր քաղաքաշինության բնագավառում տարածքների բարեկարգման

աշխատանքների շինարարության իրականացումը՝ բնակելի, հասարակական, արտադրական, էներգետիկ և հիդրոտեխնիկական լիցենզիաների ներքո աշխատանքների կատարված լինելը, իսկ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից որպես նմանատիպ ներկայացված պայմանագրերի շրջանակներում կատարվել են հրավերով սահմանված՝ բնակելի, հասարակական, արտադրական, էներգետիկ և հիդրոտեխնիկական լիցենզիաների ներքո շինարարական աշխատանքներ:

Այսպիսով, գտնում ենք, որ Ընկերությունը բավարարում է Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով պահանջվող <<Մասնագիտական փորձառություն>> և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշներին, ուստի նման պայմաններում գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով Ընկերության հայտը գործել է ոչ իրավաչափ:»:

Ի լրումն 06.09.2019թ.-ին ներկայացված բողոքի, Ընկերությունը 16.09.2019թ.-ին ներկայացված լրացմամբ հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող

ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

«Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը՝ 179 500 000 ՀՀ դրամ՝ որպես արժեք, և 215 400 000 ՀՀ դրամ՝ արժեք + ԱԱՀ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի 2016-2018թթ. համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ «ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում ներկայացված գնային առաջարկից /կցվում է/: Մասնավորապես, համաձայն՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից 06.09.2019թ. տրամադրված թիվ 510 տեղեկանքի՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի 2016-2018թթ. համախառն եկամտի հանրագումարը կազմում է 222 205 690 ՀՀ դրամ:

Վերոհիշյալի հիման վրա կարելի է արձանագրել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ն ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ, քանի որ վերջինիս երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը՝ ՀՀ դրամը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից՝ ՀՀ դրամից:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում արդեն իսկ քննվել են նմանատիպ բազմաթիվ գործեր, որպես օրինակ նշենք թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/53 ծածկագրով բողոքի վերաբերյալ կայացրած որոշումը, որտեղ բողոքներ քննող անձն արձանագրել է՝

«Արձանագրում եմ, որ ԳԲՔԱ-ՆԳ-2019/53 բողոքի քննության շրջանակներում ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 24.07.2019թ. գրության՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 05.08.2019թ. գրությամբ հայտնել է, որ ՀՎՍՎ թիվ 2 բաժնում հաշվառված «Գառու Գրուպ» ՍՊԸ-ի 2019թ.-ին նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը /2016թ.–114,834,812, 2017թ.–113,951,400, 2018թ. – 172,345,119/ կազմում է 401 131 331 ՀՀ դրամ:

Այսպիսով, հաշվի առնելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գրությունը, արձանագրում եմ, որ «Գառու գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը՝ 401,131,331 ՀՀ դրամը, պակաս չէ ներկայացված գնային առաջարկից՝ 399,000,000 ՀՀ դրամից, ուստի գտնում եմ,

որ «Գառու գրուպ» ՍՊԸ-ն բավարարում է ֆինանսական չափանիշի որակավորման մասով, հետևաբար «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք՝ բողոքը բավարարել՝ պարտավորեցնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար «ԶԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 28.08.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը

Միևնույն ժամանակ բողոքներ քննող անձի ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի հայտը մերժելու արդյունքում պետությունը ստիպված է լինելու պայմանագիր կնքել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի հետ, ու առաջարկված գինը մոտ 17 մլն. ՀՀ դրամով ավելի բարձր է, և փաստորեն դրա հետևանքով պետությանը հասվելու է մոտ 17 մլն. ՀՀ դրամի վնաս:»:

Ելնելով վերոգրյալից, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված «ԶԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 28.08.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

3. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 2019թ.-ի սեպտեմբերի 9-ին գրությամբ դիմել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից 06.09.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 16.09.2019թ.-ին թիվ Մ-41515-2019 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ներկայացնում ենք ԶԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով բաց մրցույթի ԳԲՔԱ-ԼՕ-2019/64 բողոքի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումները եղել են իրավաչափ և համապատասխանել են գնումների գործընթացը կարգավորող օրենսդրական ակտերին:

Մասնավորապես, ընթացակարգի հայտերը բացվել և գնահատվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) կետերի համաձայն (1-1 Bacman nisti ardzanagrutyun-compressed):

Առաջին տեղ զբաղեցրած մասնակից է հայտարարվել նվազագույն գնային առաջարկ (1-2 Gnayin arajark) ներկայացրած մասնակից «Ջերմուկշին» ՓԲԸ-ն (այսուհետ՝ մասնակից), որին ուղարկվել է որակավորումը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման պահանջ (3 Ծանուցում_signed, 3 Memo Style), իսկ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում (4 ՀԱՐՑՈՒՄ ՊԵԿ՝ Ջերմուկշին ՓԲԸ_signed, 4 Memo Style 2) է ներկայացվել եզրակացություն ստանալու նպատակով:

Համաձայն ՀՀ ՊԵԿ-ի կողմից ուղարկված եզրակացության (3 Ezrakacutyun)' մասնակցի 2016-2018 թվականների համախառն եկամուտը կազմել է 166,205,690 ՀՀ դրամ, որը պակաս է եղել մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկից՝ 215,400,000 ՀՀ դրամից:

Համաձայն կարգի 63-րդ կետի՝

«63. Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը՝ բացառությամբ մասնագիտական վերապատրաստման, աուդիտորական կամ խորհրդավորական ծառայությունների, շինարարական ծրագրերի՝ ներառյալ դրանց իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության

գործող ստանդարտներով կամ նորմատիվ-տեխնիկական պահանջներով սահմանված դեպքերի կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:»:

Համաձայն կարգի 47-րդ կետի՝

«47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:»

Մասնակցին ուղարկվել է ծանուցում՝ «Ֆինանսական չափորոշիչ» որակավորման անհամապատասխանության շտկման նպատակով (6 Tsanucum_signed, 6 Memo Style):

Սահմանված 3 աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի կողմից որպես շտկում ներկայացվել է «Հաշվարկ ռեզիդենտների շահութահարկի» փաստաթուղթը (7 Tsavalatert ev shahutahark-compressed):

Համաձայն կարգի 48-րդ կետի՝

«48. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:»

Քանի որ մասնակիցը շտկումն իրականացրել է առանց կոմիտեի կողմից հաստատված փաստաթուղթ ներկայացնելով՝ գնահատող հանձնաժողովը, օգտվելով կարգի 67-րդ կետով սահմանված իրավունքից («67. Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:»), նիստը կասեցրել է և ուղարկել է գրություն պետական եկամուտների կոմիտե մասնակցի 2016-2018 թվականների համախառն եկամտի վերաբերյալ նոր տեղեկատվություն ստանալու նպատակով (8 Grutyun PEK, 8 Mulberry 2.0 – Ցուցադրախմբակ):

Համաձայն կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության (9_GRUTYUN_NAKHAGAH, 9 Mulberry 2.0 - Ցուցադրախտակ)' մասնակցի 2016-2018 թվականների համախառն եկամույրը կազմել է 182,205,690 ՀՀ դրամ, որը պակաս է եղել վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկից՝ 215,400,000 ՀՀ դրամից, և գնահատող հանձնաժողովը որոշել է մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, ինչպես նաև համաձայն 45-րդ կետի՝ մասնակցի տվյալներն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ սահմանված կարգով ընթացք տալու համար:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունում հստակ նշված է մասնակցի հայտը մերժելու հիմքը, որը օրենքով սահմանված կարգով հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում:

Հարկ ենք համարում նշել նաև, որ «մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով մասնակցի հայտը չի մերժվել, և գնահատող հանձնաժողովի գնահատման ընթացքի վերաբերյալ դիրքորոշում հայտնելու անհրաժեշտություն առկա չէ:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, մենք գտնում ենք, որ ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ՝ պահպանելով օրենքի և կարգի՝ սույն ընթացակարգին վերաբերող բոլոր դրույթները:

Կից ներկայացվում է հայտերի բացման նիստի արձանագրության, մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի, մասնակցին ուղղված ծանուցման, մասնակցի կողմից ծանուցման պատասխանի, ՀՀ ՊԵԿ ուղարկված հարցման, ՀՀ ՊԵԿ-ի կողմից ստացված եզրակացության, մասնակցին ուղարկված շտկման ծանուցման, ՀՀ ՊԵԿ ուղարկված գրության, ՀՀ ՊԵԿ-ից ստացված պատասխանի և հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի արձանագրության պատճենները:»:

4. ԳԲՔԱ-ԼՕ-2019/64 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

12.06.2019թ.-ին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից «ՀՀ Վայոց ձորի մարզի Զերմուկ քաղաքի Քաղաքային զբոսայգու բարեկարգման, հեծանվաուղու և սանհանգույցների կառուցման» աշխատանքների ձեռքբերման

նպատակով հայտարարվել է «ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների 20.07.2019թ.-ին հայտ է ներկայացրել նաև «Ջերմուկշին» ՓԲԸ-ն:

Ընկերությունը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Ընկերությունը գնային առաջարկը կազմել է 215,400,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.07.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետերը, որոշել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին տեղեկատվությունը ստանալու նպատակով:

Հանձնաժողովի 28.08.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 29.07.2019թ.-ին կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի 2016-2018 թվականների համախառն եկամուտը կազմել է 166,205,690 ՀՀ դրամ, որը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով, որ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից՝ 215,400,000 ՀՀ դրամ գումարից և հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի դրույթները՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ին ներկայացվել է վերոնշյալ անհամապատասխանությունը շտկելու ծանուցում:

Որպես շտկում՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ն ներկայացրել է իր կողմից շտկված «հաշվարկ ռեզիդենտների շահութահարկի» փաստաթուղթը, որտեղ 2017 թվականի համախառն եկամուտը կազմում է 59,656,376 ՀՀ դրամ:

Վերոնշյալ տեղեկատվությունը ճշտելու համար Հանձնաժողովի կողմից կրկին հարցում է կատարվել կոմիտե:

22.08.2019թ.-ին Կոմիտեի կողմից ստացված թիվ Մ/150-19 տեղեկատվության համաձայն՝ Ընկերության 2016-2018 թվականների համախառն եկամուտը կազմել է 182,205,690 ՀՀ դրամ, որը կրկին պակաս է եղել վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկից՝ 215,400,000 ՀՀ դրամից:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով վերոգրյալը, որոշել է «Ջերմուկչին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը գնահատել անբավարար և մերժել:

Ի պատասխան Բողոքներ քննող անձի 20.09.2019թ.-ի թիվ ԲՔԱ-ԼՕ/02/15606-2019 գրության, Կոմիտեն 01.10.2019թ.-ին թիվ Մ-43926-2019 գրությամբ հայտնել է, որ հիմնվելով ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության 26.09.2019թ.-ի թիվ Ն/70-12/122134-2019 գրության վրա, ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն 26.09.2019թ.-ի դրությամբ «Ջերմուկչին» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 09000604) համախառն եկամուտը կազմում է 222,205,690 ՀՀ դրամ:

Նույն գրությամբ Կոմիտեն տեղեկացրել է, որ Ընկերությունը 2016թ. և 2017թ. համար ներկայացրել է ճշգրտված շահութահարկի հաշվարկներ՝ համապատասխանաբար 30.08.2019թ.-ին և 30.07.2019թ.-ին:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Ջերմուկչին» ՓԲԸ-ի կողմից 06.09.2019թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է, ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ (02.05.2019թ.-ի N 516-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը ...

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

4) էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին

ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում

նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա

դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Ընդ որում, հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

Հրավերի 2.5 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով.

գ. եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պայմանը չի գործում և տվյալ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն.

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցների «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը գնահատելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

12.06.2019թ.-ին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հայտարարված «ԶԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ջերմուկշին» ՓԲԸ-ն:

Ընկերությունը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԶԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Ընկերությունը գնային առաջարկը կազմել է 215,400,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, ինչով պայմանավորված Հանձնաժողովի կողմից վերջինս ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե կողմից 29.07.2019թ.-ին ստացված տեղեկատվության համաձայն՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ի 2016-2018 թվականների համախառն եկամուտը կազմել է 166,205,690 ՀՀ դրամ, որը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

Որպես արձանագրված անհամապատասխանության շտկում՝ «Ջերմուկչին» ՓԲԸ-ն ներկայացրել է «հաշվարկ ռեզիդենտների շահութահարկի» փաստաթուղթը, որտեղ 2017 թվականի համախառն եկամուտը կազմում է 59,656,376 ՀՀ դրամ:

Կոմիտեի կողմից 22.08.2019թ.-ին ստացված թիվ Մ/150-19 տեղեկատվության համաձայն՝ Ընկերության 2016-2018 թվականների համախառն եկամուտը կազմել է 182,205,690 ՀՀ դրամ, որը կրկին պակաս է եղել վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկից՝ 215,400,000 ՀՀ դրամից, ինչով պայմանավորված «Ջերմուկչին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը գնահատվել են անբավարար և մերժվել են:

Կոմիտեն 01.10.2019թ.-ին թիվ Մ-43926-2019 գրությամբ հայտնել է, որ հիմնվելով ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության 26.09.2019թ.-ի թիվ Ն/70-12/122134-2019 գրության վրա, ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն՝ 26.09.2019թ.-ի դրությամբ «Ջերմուկչին» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 09000604) համախառն եկամուտը կազմում է 222,205,690 ՀՀ դրամ:

Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ ՊԵԿ 01.10.2019թ.-ին թիվ Մ-43926-2019 գրությունը, հանգում է, այն եզրակացության, որ 12.06.2019թ.-ին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հայտարարված «ԶԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ջերմուկչին» ՓԲԸ-ի հայտ ներկայացնելու նախորդող երեք տարիների համախառն եկամուտը պակաս է եղել վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկից, սակայն հետագայում Ընկերությունը 2016թ. և 2017թ. համար ներկայացրել է ճշգրտված շահութահարկի հաշվարկներ՝ համապատասխանաբար 30.08.2019թ.-ին և 30.07.2019թ.-ին, որի արդյունքում 26.09.2019թ.-ի դրությամբ «Ջերմուկչին» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 09000604) համախառն եկամուտը կազմել է 222,205,690 ՀՀ դրամ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընկերության հայտը՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով բավարարում է «ԶԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, քանի որ ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 01.10.2019թ.-ին թիվ Մ-43926-2019 գրության՝ «Ջերմուկչին» ՓԲԸ-ի համախառն եկամուտը կազմում է 222,205,690 ՀՀ դրամ, որը պակաս չէ վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկից՝ 215,400,000 ՀՀ դրամից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից 06.09.2019թ.-ին ներկայացրած բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 28.08.2019թ.-ի թիվ 4 արձանագրությամբ կայացված «Ջերմուկշին» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆԶ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ

